

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2015թ. նոյեմբերի 1-14-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Մահացության պատճառական միտումները Կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 2-5-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Ջագրեբում (Խորվաթիա) կայացած Էներգետիկ հաշվեկշիռների կազմման վերաբերյալ Ինոգեյթի տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 3-4-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովայի Հանրապետություն) կայացած «Ըստ սեռերի վիճակագրության տարածումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը և ուսուցմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 9-18-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և առաջին կարգի մասնագետ Ն. Բաբոյանը մասնակցել են ք. Հաագայում (Նիդերլանդներ) կայացած «Ազգային հաշիվները գործողության մեջ» խորագրով փորձառու մասնագետների մոդուլ դասընթացին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 17-18-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Ինոգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանց» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 17-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Տիրանայում (Ալբանիա) կայացած «Արդյունքների համար վիճակագրական տվյալների տարածումը» խորագրով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 18-19-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած Արևելյան համագործակցության Պլատֆորմ-2 ծրագրի շրջանակում կազմակերպվելիք «Աշխատանքի շուկայի պահանջարկի/ սպասումների կանխատեսումը և առաջարկի հետ համապատասխանեցումն Արևելյան համագործակցության երկրներում. աշխատանքի

- ✓ շուկայի և մասնագիտական հմտությունների դիտարկում» խորագրով երրորդ սեմինարին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 18-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Ակտիվ ծերացման վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներում առկա հիմնախնդիրները» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 25-27-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ներդրումը կրթության վիճակագրության ոլորտում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած 2014թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների գնային տեղեկատվության քննարկման և համաձայնեցման նպատակով կազմակերպվող աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 1-4-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Բիշքեկում (Ղրղզստանի Հանրապետություն) կայացած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և Ղրղզստանի ազգային վիճակագրական կոմիտեի հետ համատեղ կազմակերպվող Վիճակագրության գծով աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 16-18-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Արդյունաբերական զարգացման միտումները և մրցակցությունը ԱՊՀ երկրներում» թեմայով բարձր մակարդակի սեմինարին: